

լմ է, վասն այնորիկ ասացի թէ յիմմէ անտի առնուցու եւ պատմեցէ (ad առնու եւ պատմէ) ձեզ. Ագ. 366. բեկորներ եւս կը գտնուին ցիրուցան: Չոր ունի Հայր՝ ունիմ (bԱԲ եւ) եւս. Ագ. 369—370. նա զիս փառաւոր անէ. Ագ. 211: Փայլուն ապացոյց են այս հատուածները թէ ինչ տարածութեամբ կ'ըմբռնէր Ագ. յառաջըրուութեան մէջ ազատութիւնը. նա միայն 366 էջի հատուածով յառաջըրուութիւն կ'ընէ, մինչ այլուր աւելի կամ պակաս կը յարմարցնէ խօսքի ընթացքին: Տատիան ունի 11 եւ 15 համարները, որոնք սակայն կը տարբերին Ագ. էջ. Իսկ վասն դատաստանաց, զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է. Տ 207. ամենայն որ ինչ միանգամ ունի Հայր իմ՝ այն իմ է, եւ զոր ես ունիմ՝ այն Հօր իմոյ է. Տ 164:

ԺԶ. 33. ես միայն յաղթեցի աշխարհի. փարպ. 109. «միայն» յաւելուածը չունին համեմատական հրատարակութիւններն ու ասորականները. կ'երեւայ Փարպեցիէն է:

ԺԷ. 3. այս են կամք իմ, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտը Աստուած. Ագ. 143. Յովհ. կը զնէ՝ Այս են յաւիտենական (տ. յաւիտենական) կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ (տ. ճշմարիտը) Աստուած. ԺԷ. 3. «կամք իմ» չունին քննական հրատարակութիւնները:

ԺԸ. 16. այսուհետեւ սոքա չեն յաշխարհէ աստի, որպէս եւ ես չեմ յաշխարհէս (adԱԲ յաշխարհէ). Ագ. 300. «այսուհետեւ սոքա» չունին Չ. Soden, եւ ասորականները:

ԺԹ. 28. յետ այսորիկ զիտաց Յիսուս, եթէ ահա (abdԱԲ չունին ահա) ամենայն ինչ կատարեալ է՝ ասէ. ծարաւի եմ. Ագ. 235. Ագ. կը ցատկէ «զի կատարեցի զիւրն», այլապէս կը հետեւի Չ.ի:

ԺԹ. 37. հայեցին եւ տեսցեն զոր (a հայեցին յոր) խոցեցինն. Ագ. 235. Չ՝ հայեցին ի նա, յոր խոցեցինն:

Վերլուծելով այս հատուածին տեղիքները՝ կրնանք ամփոփել արդիւնքը քանի մը կէտով.

1. Ազաթանգեղոս ու Փարպեցի իրենց յառաջըրուութեանց մէջ յաճախ սերտորէն չեն կապուիր իրենց առաջադիր Աւետարաններուն. անոնք լայն չափերով կը յարմարցնեն Աւետարանին տեղիքները իրենց նախագատութեանց ընթացքին: Ստեյպ միեւնոյն Աւետարանչին տեղիքները, երբեմն նաեւ զանա-

զան Աւետարանիչներու խօսքերը կը ձուլեն, կամ գիտաւորեալ կամ յիշողութենէ յառաջ լեբելով. նոյնպէս կ'ընդլայնեն ու կը կրճատեն զանոնք: Լաւագոյն ապացոյցն է իրենց այս լայն ազատութեան, երբ միեւնոյն տեղիքը այլ եւ այլ տեղ՝ տարբեր ձեւով ու զգեստով կը յիշատակեն. այսպէս՝ Մատթ. Ե. 45. Ժ. 40. Յովհ. Գ. 28, 29, 31—36. Ե. 19. Ժ. 37, 38. ԺԶ. 8—15 եւն:

2. Այդ լայնօրէն ըմբռնուած ազատութեան հետ մէկտեղ՝ անոնք ստեյպ գրեթէ բառացի յառաջ կը բերեն Աւետարանիչներու խօսքերը: Եւ ուր չեղում մը կը նշմարուի Չ.ի եւ պատմագիրներու միջեւ՝ այդ միայն լաւական չէ ապացուցանելու թէ դարձեալ ազատ յառաջըրուութեան մը հետ գործ ունինք. նախորդ յօդուածի Տատիանեան ընթերցումները լաւագոյն ազդանիշն են այս զգուշութիւնը մեղի ներշնչելու:

3. Այդ ազատութեան քով կը տեսնուին նաեւ ուրիշ յատկանշական ընթերցումներ այս հատուածիս մէջ իսկ, որոնք առանձնապէս թելադրիչ են երկու պատմագիրներու առաջադիր Աւետարաններու համար, եւ մեր բնագրէն տարբեր օրինակ մը ենթադրել կուտան. այդպիսի տեղիքներ են այս հատուածիս մէջ՝ Մատթ. Ե. 28, Զ. 12, Թ. 13, ԺԲ. 18, 49, ԺԸ. 3. Մարկ. Թ. 49. Դուկ. Ա. 72—75, ԺԲ. 10, ԻԳ. 46. Յովհ. Գ. 16, ԺԵ. 15:

(Շարունակելի է) Զ. Պ. ԷՍԱՊԱԼԵԱՆ



ՆԵՐՍԷՆԻ ՎԱՐԳՆԵՆ

ՆԻ ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ԿՆՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԲԵՆԵՎԵՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն):

50. «Ձեռնարկելն ՅԱՅՏԵՆ ՅԵԿԵՂԵՅԻ»

Պտորով քաջալերուած վահանի թելադրութիւններէն արձակած էր հրաման, որ համախմբուին ժամադիր ժամուն մոզեր, Պարսկաստանի այլ եւ այլ մոզաց-դպրոցներէն, որոնք պիտի ուղարկուէին Հայաստան եւ զրացի երկիրներ, ուսուցանելու մարդկան մոզական օրէնքը: Կը հաւաքուին աւելի քան 700 մոզ: Անոնց «իշխան» կը կարգէ թագաւորը Վնդոյ Մոզպետը. եւ ընկերացնելով ա-

նոնց «բազում այրուծի» ճանապարհ կը հանէ դէպի Հայաստան—Վրաստան եւ Աղուանից աշխարհը: Վահան Սիւնի, Հայոց Մարզպանը, պիտի առաջնորդէր այդ բազմութեան:

Եղիշէ կը դէք. «Իսկ խոհերականքն այնուհետեւ յարուցեալք յիւրաքանչիւր խաւարային դարանացն՝ իղձք լինէին [վաղվազակի գհրամանն կատարել: Չայն արարեալ (°) յաշխարհս հեռաւորս՝ միանգամայն խաղալ զնալ յերկիրն Արեւմտից: Եւ մինչ չեւ հասեալ էին յաշխարհն մեծ Հայոց]՝ փայտս ընկենուին եւ վիճակս արկանէին, թէ ո՛ր լեզու որո՛ւմ դասու հասցէ յաշակերտութիւն»: «Եւ այնուհետեւ միմեանց պատահէին իբրեւ զեւս. եւ լինէր գունդ զօրաց բազմաց. եւ չարասէրն սատանայ՝ իբրեւ զօրավար ի մէջ նոցա երեւէր: Եւ անդադար յորդորելով զամենեսեան ձեպեալ փութացուցանէր» (39):

Մոզերու թիւը «աւելի քան 700» էր: Ասոնք միայն Հայաստանի համար չէին: Եղիշէ կը թուէ մի առ մի այն աշխարհները, ուր պիտի գործէին անոնք: Ինձ կը թուի թէ աշխարհացանկը, զոր յառաջ կը բերէ հոս Եղիշէ, ունի սերտ կապակցութիւն այն աշխարհացանկին հետ, որ ներկայացուած էր Ա. Յեղանակին մէջ: Սկզբնաբար ասոնք մէկ էին հաւանօրէն. երկուքին վրայ ալ զգալի է խմբագրին ձեռքը. անոր թոյլ, տարտամ եւ չփոթ ոճը կը նկատուի երկու ցանկերու մէջ ալ: Յառաջ կը բերեմ զանոնք դէմ առ դէմ զհետեւմամբ, Վիեննայի Թ. 971 ձեռագրի ընթերցուածով, որ աւելի ընտիր բնագիր կ'ընծայէ քան Տպագիրը.

Ա. էջ 10.

Բ. էջ 39.

Ըստ այսմ պատճենի հրօճարակ եհաս եւ ի Հայոց ման առեալ (°) էր յարաշխարհն³, ի վրաց եւ Աղուանից եւ ի Լիւնաց, ի աշխարհին, նոյնպէս վրաց Մաւղէից եւ ի Կորդուաց, եւ Աղուանից եւ Լիւնաց, յԱղձնեաց եւ այլ բազում⁴ Աղձնեաց եւ Կորդուաց եւ տեղեաց հեռաւորաց...: Մաւղէից եւ Դասան եւ որ Գունդ կազմէր ի Հայոց այլ եւս ուրեք ուրեք ի մեծաց...: Ըստ նմին օրի-ժամուկ յիշխանութեանն նակի ի վրաց եւ յԱղուանից եւ յաշխարհէն Լիւնաց. նէութիւնն:

¹ Գառակուսի փակագծի մէջ առնուած տողերը խմբագրէն են. անոր անհեղեղութիւնն է նաեւ բանակին շարժումը՝ որ Արեւելքէն ճանապարհ կ'ելլէ «խաղալ զնալ յերկիրն Արեւմտից» հասնելու համար «յաշխարհն մեծ Հայոց»: Պէտք է ըսել՝ «յերկիրն Հիւսիսայն»: Սկզբնաբար «իղձք լինէին» իւր շարունակութիւնն ունի «փայտս ընկենուին» պարբերութեան մէջ:

² Կախարհակուի հաւանօրէն Վահան Սիւնի:
³ Տպ. եհաս յաշխարհն Հայոց:
⁴ Տպ. եւ բազում այլ:

Եւ որ այլ եւս ի կողմաց հարաւոյ՝ մերձ ի սահմանս Տաճկաստանի եւ ի Հոռոմոց աշխարհն եւ ի Կորդուաց եւ ի Դասան⁵ եւ ի Մաւղէ⁶ եւ յԱղձնեաց⁷. որք էին հաւատացեալք եւ մկրտեալք ի մի կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի:

Ուստի նկատի կ'առնուէին Հայաստան, Վրաստան, Աղուանից եւ Լիւնաց աշխարհներն եւ հարաւային Հայաստանի Աղձնիք եւ Կործայք նահանգները հետեւեալ գաւառներով. Կորդուք, Մաւղէք, Դասան եւ Արզնարգիւն. որոնք բաժնուած հանուած էին «Մեծ Հայոցմէ» եւ կը կառավարուէին ուրոյն մարզպանով, կոչուած նաեւ բղէշի:

Մոզպետն Վնդոյ եւ Մարզպանն Վահան Սիւնի «կէտ եղեալ զժամանակն՝ զամիսն վեցերորդ (այսինքն զՉ. օրն նաւասարդ ամսոյն)՝ տաղնապէին եւ ստիպէին արքունի հրամանաւ» զբանակին, հասնելու Հայաստան ժամադիր ժամուն (39), այն է 12 Յուլիս 570: Արդեամբք ալ «գունդն Հայոց (իմացի՛ր՝ Պարսից) ամենայն օգնականօքն⁸ հանդերձ եւ ամենայն մոզուցն բազմութեամբ յամսեանն չորրորդի (այսինքն՝ ի չորրորդում ամսոյն Նաւասարդի) եկին հասին յաշխարհն Հայոց՝ ի գիւղաքաղաք մի մեծ, որում անունն էր Անդղ: Բանակեցան, բոլորեցան, զետեղեցան եւ յամենայն կողմանց անդր ժողովեցան եւ եղեն անթիւ բազմութիւն» (44):

Չօրաց թիւը Յովհ. Եփեսացի կը նշանակէ 2000 այրեւծի: Անդղ ամուր վայրը ըն-

⁵ Տպ. ի Գոպան: — Դասան (հմմտ. Փաւստոս, Դ. 50. «Եւ Դասարնորէին» (կարգա՛լ Դասան եւ Ընեհիմէին, սս. Beth Rēh'ime, Remaina), սս. Beth Dāsen, Աղձնեաց գաւառը. հմմտ. Հիւրշման, Տեղոյ անուններ, 182:

⁶ Տպ. Մաւղէից: — Միայն Եղիշէի քով կը յիշուի Աղձնեաց այս գաւառը Մաւղէ եւ Մաւղէից գրչութեամբ. սս. Beth Zawdai, լտ. Zabdicena. Հիւրշման (անդ, 183) կ'առաջարկէ կարգալ Չաւղէ(ք):

⁷ Ձեռագիրը կը կարգալ «յԱղձնարգիւն», այն է յԱղձնարգիւն = Արզնարգիւն. վերջինս վկայուած է թովմա Արծրունիէն (81). «Եկն եհաս (Բարձուճա) յԱրզնարգիւն եւ յաշխարհն Մոկաց»: Դաւառիս դիմբը յայտնի չէ. Հիւրշման, անդ, 183, Աղձնեաց մէջ կը զնէ: Ինձ կը թուի թէ նոյն է Արզն = Արզուն գաւառին հետ, որ ժամանակ մը երկուքի բաժնուած կ'երեւայ. ասորի հեղինակը կը զանազանեն Արզուն եւ Արզուն-Ոստան (Braun, Das Buch der Synhados, 32, 34, 162. Հիւրշման, անդ, 77—78, 167—169), երկուքն ալ եպիսկոպոսանիստ: Հաւանօրէն Արզն = Արզուն եւ Արզուն-Ոստան յետոյ, Չ. դարուն վարչականապէս միացած են եւ կոչուած Արզն-Արզուն = Արզնարգիւն:

⁸ Այսինքն՝ փուշարկանօքն հանդերձ: Օգնականք հոս թարգմանութիւնն է պարսկ. rušēbān բառին, որ բառապէս կը նշանակէ պահապան թիկանց, թիկնապահ:

տրեց մարզպանը, անշուշտ դիտելու, ճշգրիտ համար Հայոց բռնելիք դիրքը: Անդր քաղաքագիւղս ծանօթ է նաև Ղ. Փարպեցիին. 451ին ուխտապահ բանակին ամարանոցն եղած էր այն. «Եւ հասեալք ամիսք տօթոյն ջերմութեան՝ չու արարեալ ամենայն բազմութիւնն Հայոց ի տեղիս հովոց՝ դային հասանէին ի գաւառն որ կոչի Ծաղկոտն, մերձ ի բերդն ամուր, զոր Անդղն անուանեն. դայն տեղեօք արարեալ բանակեօտեղս արանց՝ դարէին անդ զաւուրս տօթոյն» (Փարպ. 60): Անդր գիւղն եւ բերդը կը յիշէ նաև Պրոկոպիոս (Պարսկ. Բ. 25). «Հարիւր քսան ասպարիզաւ հեռի ի Դուռայ երեւի լեառն դժուարամտոյց եւ անազին գառի թափ, յորոյ դժուարաթեռ խոխոմս է գիւղն՝ Արցալ... առ ստորոտով լեռինն է գիւղն. իսկ ի գահաւիճ գաղաթանն բերդ ամուր համանուն գեղջ»⁹:

Արքայատուր հրամանն էր. «Մինչեւ ի նաւասարդ, ասէ, յամենայն տեղիս, որ իցեն ընդ իշխանութեամբ թաղաւորս»¹⁰ մեծի՝

ա. Բարձրին կարգք եկեղեցւոյ:
բ. Փակեցին եւ կնքեցին դրունք սուրբ տաճարաց:

գ. Գրով համարով առցին¹¹ նուիրեալ սպասքն յարքունիս:

դ. Լուսեցեն ձայնք սաղմոսացն եւ դարեացին ընթերցուածք անսուտ մարգարէիցն:

ե. Քահանայք մի իշխեսցեն ի տունս իւրեանց ուսուցանել զժողովուրդս:

զ. Հաւատացեալքն ի Քրիստոս արք եւ կանայք, որ բնակեալ են յիւրաքանչիւր մեհարանս՝ փոխեցեն զհանդերձս իւրեանց ըստ աշխարհական կարգաց:

է. Կանայք նախարարացն կալցին զուսուսն վարդապետութեան մողաց:

ը. Ուստերք եւ դստերք աղատաց եւ շինականաց կրթեցին ի հրահանգս նոցին մողաց» (40) եւն:

Ուստի քաջ չափուած ձեռուած ծրարիք մը: Առանց տարակուսի ունէր պարսիկը առ այս քրիստոնէայ խորհրդատու մը. Եղիշէ կը գրէր Վասակ = Վահանի համար. «զոր ինչ ոչ գիտէին անօրէն հեթանոսք՝ իմացուցանէր

նոցա [եւ] վասն ուխտին քրիստոնէութեան, եթէ որպէս հնարիւք կարացէ բառնալ յաշխարհէն Հայոց» (74):

Հարստահարութիւնները, որոնց երկար տարիներ ենթարկուած էր Հայաստան, կ'երեւայ թէ յուսացուած արդիւնքը չէին տուած: Չսպած էին Հայերը իրենց սրտի դառնութիւնը. համբերութեամբ տարած էին բռնութիւններն եւ բռնադրօսութիւնները, որովհետեւ «չեւ էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին, վասն այնորիկ եւ ոչ ոք ընդդիմացաւ նմա, թէպէտ եւ էր ծանրութիւն հարկացն» (19):

Իսկական հալածանքի հրամանը այժմ կ'ելլէ յարքունուտ. այժմ կ'ուղարկուին Հայաստան մողեր եւ մողպեաներ, որոնք հովանաւորուած հեծելազօրքէն՝ ձեռք պիտի կարկառէին «յայտնի յեկեղեցին». որոնք պիտի «յանդգայ յարձակմամբ յաւարի առնուլ փութային զգանձս սուրբ եկեղեցեացն» (39):

Հրամանին գործադրութեան եղանակը իմանալու համար կարելու էր համարիմ յառաջ բերել Եղիշէին հատուած մը, ուր նկարագրուած է համառօտ, բայց շօշափելի գծերով սոյն այս հրամանի հռչակումը Աղուանքի մէջ. «Եւ անա յետ աւուրց բազմաց եկն եհաս հազարապետն Աղուանից սուրբ եպիսկոպոսապետաւ աշխարհին. մեծաւ տաղնապաւ փութացուցանէր զգորսն եւ ասէր. 1. Գուռն Պարսից, որ էր ի կողմանս աշխարհին Հոնաց, դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհս մեր. 2. եւ բազում եւս այլ այրուծի, որ ի Դրանէ եկն. 3. եւ թող զերկոսեան՝ այլ երեք հարիւր մոգ վարդապետ ածեալ եմ ընդ իւրեանս. 4. պառակտեցին գաշխարհն. եւ գումանս ոմանս յինքեանս արկին. 5. եւ կաւիսն յեկեղեցիսն ձեռնարկել. 6. եւ հրամանաւ քաղաւորին ստիպեմ գամեմետեանս եւ ասին. Եթէ կամօք յամն առնուք գորէնս՝ պարգեւս եւ պատիւս գտանէք ի նմանէ. 7. եւ քողութիւն հարկացն արքունի ինիցի ձեք. 8. սպա թէ կամօք զայդ չառնէք, հրաման ունիմք ի գեօղս եւ ի քաղաքս շինել տարուշանս եւ զվառական կրակն ի ներքս դնել. 9. եւ կացուցանել մոգս եւ մոգպետս օրէնս դիր ամենայն աշխարհիս. 10. եւ եթէ ստամբակեալ ոք ընդդէմ դարձցի, ինքն մահու պատուհաս ընդունի. եւ կին եւ որդիք այն-

⁹ Հ. Ղ. Բնձիճեան, Հին Հայաստան, 415:
¹⁰ Տպ. եւ Ձեռ. թագաւորին:
¹¹ Ձեռ. գրով համարեցին:

պիսւոյն անաշխարհիկք եղեալ՝ յարքունիս»^{11*} երթայցեն» (53—54):

Գրիգոր Տուրոնեցւոյ համաձայն թագաւորին հրամանը այսպէս ծանուցուած է Հայաստան. «Պարսից թագաւորի՝ Սոսրոյու կողմէն եկան Հայաստան պատգամաւորներ եւ ըսին. Թագաւորական խնամատարութիւնը կ'ուզէ իմանալ, թէ ձեռք դրած դաշինքը պիտի պահէ՞ք հաստատուն: Երբ անոնք պատասխանեցին, թէ ճշգրիտ պիտի կատարեն իրենց խոստումը, պատգամաւորներն ըսին. Եթէ դուք պաշտէք կրակը, զոր ինքը թագաւորը կը պաշտէ, ցուցուցած պիտի ըլլաք, թէ պիտի պահպանէք իր բարեկամութիւնը: Ժողովուրդը պատասխանեց թէ այսպիսի բան մը չի կրնար երբեք յանձն առնել» (§ 48, 2):

Ըստ այսմ պէտք է իմանալ Եղիշէի խօսքերը, երբ կը պատմէ. «Եւ եղեւ յետ աւուրց քսան եւ հնդից մողպետն ինքնին մողօքն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ (ի Դուռն կամ Արտաշատ) քակել (կարդալ՝ փակել) զգրուած եկեղեցւոյն յաւուր միաշարաթուոյն. զփորձ առնուլ կամէր զառաջարկութեան գործոյն» (44):

Այժմեան ընդգրկն մէջ լուծած է, թէ ո՞ւր «հասանէր» մողպետը: Պիտի հասկցուէր անշուշտ «ի գիւղաքաղաքն Անդղ». բայց Արքահամ Մամիկոնեանի վկայութեամբ առ թ. Արծրունեւոյ գիտենք թէ խօսքը Արտաշատի մասին է. Յովհ. Եփեսացի Դուռնը կը յիշէ յանուանէ:

Արքունի հրամանն էր «փակեցին եւ կնքեցին դրունք սուրբ տաճարացն» (40). ըստ այսմ ուղղելու է Եղիշէի այժմեան բնագրին «քակելն»՝ «փակել»: Մողպետը որ «զփորձ առնուլ կամէր զառաջարկութեան գործոյն», ղիտմամբ կ'իրակի օր մը (3 Օգոստոս 570) կ'ընտրէ, երբ աշխարհաժողով բազմութիւնը եկեղեցի կը փութայ սովորաբար: Մողպետը բացի «մողերէն» առած էր հետը նաև իւր «օգնականներն» կամ փուշտիպանները, ինչպէս կ'ըսուի քիչ յետոյ: Կենթադրէր թէ պիտի բախի ղիմադրութեան: Արդեամբք ալ կը ծառանայ անոնց առջեւ «Ղեւոնդ երէց»: Եղիշէ կը գրէ. «Իսկ սուրբն Ղեւոնդ երէց միաբանութեամբ առաջին խորհրդովն¹² բազում ուխտիւ¹³ ի տեղ-

^{11*} Ա. յինքն՝ «ի գործ արքունի», արքունի հողերը մշակելու պիտի ուղարկուին:
¹² Տպ. խորհրդակցօքն եւ:
¹³ Տպ. կ'աւելցնէ. «ոչ ետ թոյլ»:

ւոջ անդ պատրաստական ղիպեցաւ¹⁴: Թէպէտ եւ ոչ էր տեղեկագոյն մտացն ամենեցուն նախարարացն¹⁵ եւ ոչ ուժոյ զօրութեան Մողպետին¹⁶, ոչ եկաց մնաց ամենայն եպիսկոպոսացն¹⁷ եւ ոչ սակաւիկ մի¹⁸ համբեր անօրէն իշխանին թուլացուցանել¹⁹. այլ բազում ամբոխ²⁰ աղաղակի զօրացն եւ մողացն հասուցանէր: Քանզի վերգս ի ձեռս առեալ՝ ղիպաւփուս մողացն եւ զՄողպետին ջարդեցին. փախստական յիւրաքանչիւր վանս արկանէին. եւ ինքեանք զպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոյն՝ զտէրունականն²¹ կատարէին, մինչեւ ի նոյն միաշարաթի անդադար լինելով²²» (44):

Սկզբնազիւրը շատ աղաւաղուած է խմբագրէն. թոյլ է պատմուածքը: «Սուրբն Ղեւոնդ երէց» յայտնապէս փոխառութիւն է Ղ. Փարպեցիին. թէ ի՞նչ անուն կը կրէր այդ քաջարի երէցը Սկզբնազրին մէջ, չգիտենք: Անիկա միաբանութեամբ ամենայն ուխտին, այսինքն պաշտօնէից եւ հաւատացելոց համազորձակցութեամբ կը ղիմադրէ Մողպետին եւ թոյլ չի տար, որ փակէ եկեղեցին. երբ Մողպետը կը յամառի իր «առաջարկութեան» վրայ եւ բռնի ի գլուխ հանել կ'ուզէ, կը ստիպուին հաւատացեալք «վերգս ի ձեռս» առնել: Թէ ղիմադրութիւնը ուժգին եղած է, կը տեսնուի նաև Մողպետին խոստովանութենէն (45): Յամենայն ղէպս հատուածիս մէջ չափազանցուած է իրողութիւնը խմբագրին կողմէն:

Մողպետին փորձը՝ փակելու եկեղեցւոյն դուռն եւ Հայոց ղիմադրութիւնը անազին յուզում կը պատճառէ երկու կողմերուն ալ: Անցուղարձերու մասին զեկուցանելու համար կաթողիկոսին՝ քահանայք «զմի ոմն դեսպան ձիով առաքեցին փութապէս յաշխարհն (իմացիր՝ առ կաթողիկոսն) Հայոց: <Սա> գոյժ ի բերան առեալ եւ զօձիս պատտուեալ՝

¹⁴ Միտքն է «միաբանութեամբ (եւ խորհրդով) ամենայն ուխտին», այս ինքն եկեղեցականնու եւ հաւատացելոց:
¹⁵ «Նախարարացն» խմբագրին յաւելուածն է:
¹⁶ Տպ. «եւ ոչ զօրութեան ուժոյ մողպետին ոչինչ եկաց». Ձեռ. «եւ ոչ ուժոյ մողպետին զօրութեան ոչ եկաց»:
¹⁷ «Ամենայն եպիսկոպոսացն» խմբագրին յաւելուածն է:
¹⁸ Տպ. «սո սակաւ մի»:
¹⁹ Տպ. թողուցանել:
²⁰ Ձեռ. բազմամբոխ:
²¹ Տպ. զտէրունական կանոնն. Ձեռ. զտէրունի կանն:
²² Ձեռ. լինելոյ: — Միտքն է «մինչեւ ի նոյն միաշարաթուոյն երեկոյ»:

հասեալ ի ժողովս եպիսկոպոսացն (հաւանօ-
րէն յԱրտաշատ), մեծապէս յարտասուս հա-
րեալ կայր եւ պատմէր զամենայն անցս չար-
չարանացն» (43):

Ոմբազդերը այս եւ յաջորդ հատուածը,
որոնք կը վերաբերին այս տեղ, դետեղած է
նախորդ հատուածէն յառաջ, պատմութեան
ուրիշ կերպարանք տալու համար: Գուժկանը
կը հասնի «ի ժողովս եպիսկոպոսացն». ուս-
կից պիտի հետեցնենք թէ կանխաւ հաւա-
քուած էին ի Դուին եպիսկոպոսները, խոր-
հրդակցութեան, անշուշտ թագաւորին ու-
ղարկած հրովարտակին պատասխան մը գրե-
լու համար: Թերեւս գրած էին անոնք պա-
տասխան մ'ալ: Կրնանք մտածել թէ Սկզբնա-
գրին մէջ այն ժողովը, որ յԱրտաշատ գու-
մարուած կ'ըսուի, հոս կը պատկանէր (տե՛ս
§ 39), անշուշտ բոլորովին տարբեր անուա-
նացանկով ներկայ եպիսկոպոսներու (տե՛ս
§ 51):

Մոզպետին «յայտնի յեկեղեցին ձեռնար-
կէն» եւ «Ղեւոնդ երէցի» դիմադրութիւնը եւ
այս առթիւ երկու կողման ընդհարումը, կրօ-
նական պատերազմի հոչակում էր տակա-
ւին: Եպիսկոպոսներու ժողովը կ'որոշէ իրաց
առած ընթացքը ծանուցանել ժողովրդեան:
Եղիշէ կը գրէ.

«Յայնմ ժամանակի սիրեցան եպիսկո-
պոսքն յերաբանչիւր իշխանութիւնս. եւ ա-
ռաքեցին զքորեպիսկոպոսն ի գեօղս եւ յա-
ղարակս եւ ի բազում ամուրս լեռնային գա-
ւառացն: Դրդեցին ժողովեցին զբազմութիւն
արանց եւ կանանց, զչինականաց եւ զազա-
տաց, զբահանայից եւ զմենակեցաց. խրատե-
ցին, պնդեցին եւ արարին զամենեսեան զի-
նուորս Քրիստոսի: Եւ առաջին բան խոր-
հրդին այս հաստատեցաւ. Չեոն եղբօր հա-
րազատի ի մերձաւոր իւր լիցի՝ որ անցեալ
իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. եւ
մի խնայեսցէ հայր յորդի, եւ մի ակն առ-
նուցու որդի հօր պատուոյն: Կին կուռեցի
ընդ առն ամուսնոյ. եւ ծառայ դարձցի ընդ-
դէմ տեառն իւրոյ: Օրէնք աստուածայինք
կացցեն թագաւոր ի վերայ ամենայն երկրի.
եւ ի նմին օրինաց ընկալցին յանցաւորքն
պատիժ զատապարտութեան: Եւ իբրեւ այս
այսպէս հաստատեցաւ կազմեցաւ, երեւեցան
ամենեքեան զինեալք եւ սաղաւարտեալք,
սուր ընդ մէջ եւ վահան ի ձեռին ոչ միայն
արանց քաջաց, այլ եւ կանանց առնականանց»
(43—44): «Եւ յետ այսր տազնապի խոռվու-

թեան յամենայն կողմանց յաշխարհէն... Հայոց
բազմութիւն արանց եւ կանանց ի տեղին հա-
սանէին: Եւ անդ էր տեսանել զմեծ աղէտ տա-
րակուսին. ոմանք զգերարտօսը²³ արձակե-
լով յաչացն իբրեւ յաղբերականցն հոսէին.
եւ այլքն բարձրաճիչ աղաղակէին իբրու այն
թէ գերկինս դողացուցանէին. իսկ կէսքն
խիզախելով եւ ի դէնս ընթանալով՝ զմահ
քան զկեանս ընտրէին. իսկ ոմանք ի սուրբ
ուխտէն եկեղեցոյն զաւետարանն ի ձեռն
առեալ՝ աղօթիւք առ Աստուած կարդային.
այլք ըզձանային զպատառուսն երկրին, զի
անձանց լիցի գերեզման» (44/45):

Կ'ըսուի «առաքեցին զքորեպիսկոպոսն...
ի բազում ամուրս լեռնային գաւառացն». ա-
նոնք հասան նաեւ ի Չուայլ, ուր կը գտնուէր
Վարդան Մամիկոնեան, որ Ռշտունեաց եւ
Անձեւացեաց տէրերու հետ «գօգօս լեռնա-
կողմանն ընդ իւրեանս անձեւով՝ ոչ աւելի քան
1200 այր, կ'երեւայ Դունոյ պարիսպներու
առջեւ»: Եղիշէ եւ Աբրահամ Մամիկոնեան
համաձայն են հոս:

Ըմբռնելի է այժմ Մոզպետի սարսափը,
զոր կը նկարագրէ Եղիշէ: Ասկէ կը տեսնուի
նաեւ թէ որչափ փոփոխութիւն կրած է
Սկզբնագիրը խմբագրին գրչին տակ, որ
կրճատած է հատուածներ եւ տեղափոխու-
թիւններ ըրած է հատուածներու. Եղիշէ կը
գրէ (էջ 45). «Եւ այսպէս (Դուին հաւա-
քուած հաւատացեալներու աղաղակը, լացը,
սպառնալիքը) շտապ տազնապի ի վերայ
Մոզպետին հասուցանէին. բազում անգամ
աղաչէր զօգնականսն իւր, զի ի մահուանէ
կարացցեն զնա սպրեցուցանել եւ անդէն ող-
ջանդամ յարքունիս հասուցանել»: Եղիշէ այս
տեղ ընդարձակ յառաջ կը բերէ Մոզպետի
ճառը, զոր խօսած է Մարգպանի առջեւ. ուր
զուրս կը կարկառին այն սարսափահար տպա-
ւորութիւնները, զոր զգացած է Հայ ժողո-
վրդեան ցոյցէն (45—48): Մէջբերումներս
քաղուածաբար են.

«Այլ վասն դործոյն յոր եկեալ էր՝ ստի-
պէր զնոսա (զօգնականսն իւր) եւ ասէր. Թող

²³ Այսպէս ըստ Չեռագրին. տպ. ունի «զգերար-
տօսրն իբր յաղբերականց հոսէին յաչաց իւրեանց. այլքն
բարձրաճիչ իբր այն թէ...»: — Գերարտօսը. հմտ. Գ. Մակար. Գ. 2. «Եւ քաջացն սուգ անհարին
եւ գեր՝ արտօսալից (տպ. գերարտօսալից) զոչ-
մամբ ետանդն ի վեր հասեալ՝ զսիրտս ձմէրք»: Կը
հարցնէ նորայր Բիզանդոպի. «Արդեօք Եղիշէ՞ եւս
Գերարտօսալից կարդալով ի Մակարայեցիս՝ հնարած
է զիւր Գերարտօսը, կամ այլուր գտած է գայն, չկա-
րեմ ասել». Կորին վարդապետ եւ նորին թարգմա-
նութիւնք. Տփղիս 1900, էջ 455, ծ. 22:

գրեմ եւ ցուցանեմ մեծ թագաւորին, զի ի
բաց թողցէ զայսպիսի իրաց առաջարկութիւն.
զի եթէ ինքեանք իսկ աստուածքն եկեացեն
մեզ յօգնութիւն, չէ հնար օրինաց մոգու-
թեան ի Հայս առնուլ զհաստատութիւն, որ-
պէս զփորձ առի միաբանութեան ուխտի եկե-
ղեցոյն: Զի թէ էին զօրք աշխարհիս մոգ,
ոչինչ խնայէին ի նոսա սատակմամբ. ոչ
միայն յարտաքինսն այլ եւ յեղբարս եւ յոր-
դիս եւ յամենայն մերձաւորս իւրեանց. նաեւ
ոչ յանձինս իւրեանց: Մարդք, որ ոչ ի
կապանաց զանդիտեն եւ ոչ ի տանջանաց
երկնչին եւ ոչ ի ստացուածոց պատկառեն,
եւ որ յետին չարն է քան զամենայն չարիս,
զմահ քան զկեանս ընտրեն. ո՞ կարէ զոցա
դիմակաց լինել...: Եթէ էր մեր անապա-
րեալ եւ ի փախուստ դարձեալ՝ միում ի մէնջ
ոչ տային ապրել: Եւ եթէ անդէն մարդիկդ
սյղպէս բռնացան, եթէ յանկարծ զղինուորսն
եւս ընդ ինքեանս միաբանեցեն, ո՞ կարէ
կեալ առաջի դոցա յանդուգն յարձակմանդ:
... Առանց բազում արեան հեղոյ դոքա մեզ
ոչ տան ձեռնարկել յեկեղեցիսդ»:

Հայ ժողովրդեան այս տարերային ցնցումն
եւ ըմբոստացումը ահամայ կը յիշեցնէ մեզի
Յովհ. Եփեսացոյ տողերը. «Մա (Մարգ-
պանը, իմա՛ Մոզպետը) եկեալ հասեալ ի մեր
քաղաքն անդէն ըստ արքայատուր հրամանին
ատրուչանս վասն աստուածութեանն թագա-
ւորին շինել կամէր: Եւ իբրեւ առաջի արար
ինձ (կաթողիկոսին) եւ քաղաքացւոցն զար-
քայական հրամանն... ասեմ...: Թէպէտ բա-
զումս աղաչեցի, այլ նա չեղ ունին, չանսաց
բանից իմոց: Յայնժամ աղբ արարի զհանդէս
իրացն ընակչաց գաւառաց գաւառաց. որք
իբրեւ յերացն ի վերայ հասին, բորբոքեցան
նախանձու որ ի Քրիստոս հաւատոցն, զրոհ
սուեալ եկին ժողովեցան իբրեւ զմի այր,
արք իբրեւ տան հազարաց վառեցան զինու
եւ զարդու ի կոխ՝ լաւ համարեալ մեռանել
վասն Քրիստոսի...: Եւ իբրեւ ամենայն նա-
խարարք եւ սեպուհք աշխարհին ի մի վայր
եկեալ հասեալ էին՝ մատեաք առ մարգպանն
... խօսեցաք ընդ նմա յաճախութեամբ բա-
նից... Եւ իբրեւ ի վերայ եհաս մարգպանն,
եթէ վառեալք ի գէն անկանել ի վերայ իւր
կամիցին եւ ինքն քան զնոսա նուազազոյն է
թուով, ել գնաց ի բաց բազում սպառնալիք
եւ վկայ իրացն զնոսա կարդայր»:

Կը տեսնուի ասկէ, թէ Հայոց դիմադրու-
թիւնը վերածուած է մեծ ցոյցի:

Ատրուչանի շինութեան մասին, որուն
չուրջը այնպէս երկար կանգ կ'առնէ Յովհ.
Եփեսացի, Եղիշէ բոլորովին կը լուէ եւ կամ
գոնէ այժմեան խմբագրութեան մէջ այս կէտի
նկատմամբ չկայ որ եւ է բացայայտ ահար-
կութիւն²⁴: Ինձ կը թուի թէ այս մասը յա-
պաւած է խմբագրիչը: Եղիշէ եւ Յովհ. Եփե-
սացոյ հաղորդած տեղեկութիւնները սքան-
չելի կերպով ներդաշնակութեան կը բերէ
Թովմաս Արծրունի. կը գրէ. «Ընդ մտաննն
նոցա (Պարսից) յաշխարհս՝ վրդովեցին
զուխտ քրիստոնէութեան. եւ փոյթ ընդ փոյթ
ձեռնամուխ եղեն աւերել քանդել զեկեղե-
ցիս... դառնապէս չարալլուկ չարչարել զքա-
հանայս... զարս եւ զկանայս մատնել ի
բանդս...: Եւ հասեալ Շաւասպայ Արծրուն-
ոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարգ-
պանան՝ շինեն ի դուռն քաղաքին զՈրմզդա-
կան մեհեանն... կայր աշխարհս ի մեծ վտան-
գաւոր աղէտս»: Ուստի թէ եկեղեցեաց կոր-
ծանուսն եւ թէ ատրուչանի շինութիւնը պատ-
մական իրողութիւններ են. ինչպէս նաեւ քա-
հանայից չարալլուկ չարչարուելը, զոր կը
յիշէր Գրիգոր Տուրոսեցի:

Մոզպետը ի տես Հայոց ցոյց տուած դի-
մադրութեան կը կազմէ խոր համոզումը, թէ
անկարելի է բռնի մոգութեան դարձնել քրիս-
տոնեայ Հայաստանը: Ըստ այսմ ալ խորհուրդ
կու տայ Մարգպանին (Վահան Սիւնուոյ), որ
իրողութիւնը իր պարզութեան մէջ ներկայա-
ցուի թագաւորին: Եղիշէ կը գրէ Մոզպետի
խօսքերով. «Մի ինչ պատկառեր դու (Վա-
հան) երկիւղիւ յարքայէ. ես գրեմ եւ ցուցա-
նեմ ի դուռն մովպետան մովպետի եւ դեր-
հանդերձապետի եւ մեծ հազարապետին, զի
ածցեն զարքայն ի հաւանութիւն, որպէս զի
ի բաց թողացուցէ ըստ առաջին հրամանին.
եւ ի կամս մարդկան սպաստան արացցեն. զի
առ սակաւ սակաւ ընդեցին ընդ օրէնս մո-
գութեանս, զի որք կալցին՝ սիրով երեւեցին
կատարել զհրամանն արքունի»: ...

Մոզպետի այս իմաստուն խորհուրդները
չեն չարժեր Մարգպանի յամառութիւնը, որ

²⁴ Անշուշտ արքայատուր հրամանը, որ հրատա-
րակուած էր Աղուանից աշխարհը՝ «ասպ թէ կամօք
զպղ շանէք, հրաման ունիմք ի գեօղս եւ ի քաղաքս
շինել արտուչանս եւ զվառական կրակն ի Ռերփս
ղինի» (54), նաեւ Հայաստանի համար կ'արժէր թէ
Հայաստանի այլ եւ այլ կէտերու վրայ կանգնուած են
ատրուչաններ, կարելի է հետեցնել Եղիշէի այն խօս-
քերէն, թէ ասպատարութենէն եւ պարսիկ բանակը
բնաջնջէին ետքը «ասպալէին քանդէին զշինուածս
նոցա, այրէին կիզուին գառուս պաշտաման կրակին,
եւ սրբէին զպղծութիւն կապալատութեան» (52):

զինու գորութեամբ կ'ուզէ ի գլուխ հանել արքունի հրամանը: Մասնաւորապէս ուշադրութեան արժանի են հետեւեալ տողերը, ուր Մարգարանը պատասխան կու տայ Մողպետին երկչոտ խօսքերուն, յանձնարարելով զիմագրութիւն. «Բայց արդ զու զոր ստեմս բարիք թուեսցի քեզ. սակաւիկ մի երկայնամիտ լեր... մինչեւ ես ինձէն ժողովեցից զօր ի թիկունս... զուխտ եկեղեցւոյք թերեւս կարացից երկիկեղկել. եւ եթէ զայդ այդպէս արարից, գիտեմ ապա թէ եւ զհրամանն արքունի կարող եմ կատարել: Եւ անդէն հրոս հանեալ ի Սիւնեաց աշխարհէն՝ զիւր գունդն ստուարացոյց ի թիկունս օգնականութեան մոզաց եւ մոզպետին: Եւ ապա սկսաւ ասել. Աղէ դու առ անգամ մի հրովարտակ ի դունն արքունի տուր՝ վասն այրուծիոյն որ յԱղուանն է տասն հազար, զի ի ձմերոց ի Հայաս եկեսցեն. եւ յորժամ զնոսա ի ձեռն ունիցիմք, չիք ոք որ եղծանել կարէ զհրամանն արքունի»: «Պատասխանի ետ Մողպետն եւ ասէ ցՄարգարանն. Այդ խորհուրդդ դարձեալ իմոցս ընդդէմ է. քանզի յորժամ մեր բունութեամբ կուուեսցուք ընդ աշխարհիս, աշխարհս ի բաց քանդի եւ մեք ի պատուհասէ չապրիմք. անձանց վրաս եւ արքունի մեծապէս դեան»: Եւ ոչինչ կամեցաւ ամենեւին ունին զնել նմա մարգարանն (48):

Պիտի հետեւցնենք ասկէ, թէ Մարգարանը ունի իւր տրամադրութեան տակ գունդ մը: Ժողովրդեան բուն գիմագրութիւնը ի վիճակի չէ զսպել այս գունդով. ստուարացնելու համար զայն հրաման կ'արձակէ Սիւնեաց աշխարհը հրոս ժողովել «ի թիկունս օգնականութեան մոզաց եւ մոզպետին»: Սիւնեաց աշխարհի մարդկան կարող է Մարգարանը հրամայել. բայց Աղուանից աշխարհի (ձորայ պահակի) զօրը Հայաստան ի ձմերոց բերելու համար չի զօրեր իր իշխանութիւնը. կը խնդրէ Մողպետէն, որ նա ինքը գրէ ի Դունն եւ հանէ այս հրամանը:

Մողպետի եւ Մարգարանի մէջ տեղի ունեցած այս խորհրդակցութիւնը կ'ենթադրեն ժամանակի միջոց: Սօսք կ'ըլլայ «վասն այրուծիոյն որ յԱղուանն է տասն հազար». եւ վա՛րագ կը յայտնուի որ անոնք «ի ձմերոց ի Հայս եկեսցեն». անշուշտ Սեպտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն: Մարգարանը «հրոս հանեալ ի Սիւնեաց աշխարհէն զիւր գունդն ստուարացոյց ի թիկունս օգնականութեան մոզաց

եւ Մողպետին»: Ուստի Մարգարանը որոշած է կտորել Հայոց գիմագրութիւնը:

Եղիշէ ակնարկութիւն չ'ըներ, թէ որ եւ է կարգադրութիւն եղա՞ւ Աղուանից, այն է ձորայ պահակի այրուծիոյն մասին: Բայց զիտենք թէ անոնք Աղուանից ջերմագոյն վայրերը ձմերեցին:

Այս միջոցին — Օդոստոս-Սեպտեմբեր — պէտք է գետեղել Աղուանից հազարապետին եւ եպիսկոպոսապետին պատգամաւորութիւնն ի Հայս: Եղիշէ կը գրէ. «Եւ ասա յետ աւուրց բազմաց եկն եհաս հազարապետն Աղուանից <հանդերձ> սուրբ եպիսկոպոսապետաւ աշխարհին. մեծաւ տաղնապաւ [փութացուցանէր զգորսն] եւ ասէր. «Գունդն Պարսից որ էր ի կողմանս աշխարհին Հոնաց, դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհս մեր. եւ բազում եւս եւ այլ այրուծի, որ ի Դունն է կին» (53):

Դարձեալ լուած են անունները: Աղուանից «հազարապետն» էր այս միջոցին հաւանորէն Շերոյ, զոր Թէոփանէս Բիւզանդացի (էջ 486) «Մարոյէս (Σαρῳης) թագաւոր Աղուանից» կը կոչէ. կը մասնակցէր 573 տարւոյ կռիւներուն իբրեւ զինակից Հայոց: Ինքն է Մենանդրէն 558 եւ 569 տարիներուն յիշուած Σαρῳσιος (նաեւ Σαρῳδιος) ὁ Ἀλαων ἡγούμενος (էջ 282 եւ 301): Իսկ Աղուանից «եպիսկոպոսապետն» (տպ. եպիսկոպոսն) էր ուրիշ կողմանէ քաջ ծանօթ «Աբաս Պարտաւայ եպիսկոպոս», որուն կը գրէր իբր 568ին Հայոց Յովհաննէս կաթողիկոս իւր զուշացուցիչ թուղթը²⁵: Իբր 575ին գրած է իրեն թուղթ մ'ալ Յովհ. Երուսաղէմի հայրապետը, որ ուղղուած է «սրբոյ եւ աստուածասիրի երանելոյ հոգեւոր եղբոր եւ պաշտօնակցի մերոյ Աբասայ եպիսկոպոսի Աղուանից»²⁶: Δεῖγγησις գրութիւնը կ'անուանէ զինքը «Աբաս կաթողիկոս Աղուանից աշխարհին»²⁷: Յովհաննէս կաթողիկոսի վերոյիշեալ թղթին մէջ կը յիշուին նաեւ Աղուանից եպիսկոպոսներէն «Մովսէս Բախաղատու, Գրիգոր Կապաղահայ, Հոռոմակ Ամարասու, Տիմոթէոս Բաղասականու, Ամբակում Շաբոյ, Յոհաննիկ Գարգմանայ եւ Աւետիկ Մեծկուանց»:

²⁵ Գրք թղթոց, էջ 81:
²⁶ Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը առ Աբաս Աղուանից կաթողիկոս. հրո. Կարապետ վարդապետ. Արարատ 1896, էջ 252—256:
²⁷ Migne, P. G. 132, c. 1245: Մ. Կաղանկատուացի, 133, 143: Աբաս եպիսկոպոսի մասին տես ընդարձակ իմ գրութիւնս՝ Թուղթ Մակարայ Բ. Երուսաղէմի հայրապետի, էջ 58 եւ ձլ.:

Կը գրէ Եղիշէ (54) թէ «Գունդն Հայոց իբրեւ լուած զայս գոյժ դատուութեան... համազունդ ժողով լինէր ամենայն աշխարհին վասն գուժարեր հրեշտակացն, որ հասին առ նոսա: Եւ միարան քաջալերս առեալ²⁸ արձակեցին զնոսա, զի առ ժամանակ մի զնոսա պատիր խաբէութեամբ կալցին, զի խափանեցին (Պարսիկք) ի չար կամացն՝ չձեռնարկել ի սուրբ ուխտ եկեղեցւոյն. եւ ինքեանք զօրութեամբն Աստուծոյ խորհուրդ ի մէջ առեալ՝ հնարիւք զելս իրացն խնդէին»:

Նախարարական ժողովին մէջ, որուն ներկայ էին Աղուանից, թերեւս նաեւ Վրաց պատգամաւորները, որոշուեցաւ Կայսեր հրեշտակութիւն մը զրկել (տե՛ս վարը):

Մողպետը կ'ըսէր. «Ես գրեմ եւ ցուցանեմ ի Դունն Մողպետան մովպետի եւ Դերհանդերձապետի եւ Մեծ հազարապետին, զի անցեն զԱրքայ ի հաւանութիւն, որպէս զի ի բաց թողացուցէ ըստ առաջին հրամանին²⁹. եւ ի կամս մարդկան ապաստան արասցէ³⁰, զի առ սակաւ սակաւ ընդեցին ընդ օրէնս մոզութեանս» (47): Ծանօթ չէ թէ գրե՞ց իրօք այսպիսի դիմում մը: Յովհ. Եփեսացւոյ համայն Մողպետ-Մարգարան ինքնին գնաց թագաւորին եւ վերադարձաւ յաղթ բանակով: Այս է անշուշտ Եղիշէի ակնարկութիւնը, թէ Մարգարանը ստուարացուց իւր գունդը Սիւնիքէն հանած հրոսով: Կրնանք մտածել թէ Հայոց կողմէն ալ պատգամաւորութիւն մ'ուղարկուած ըլլայ թագաւորին:

Մողպետին եւ կաթողիկոսին մէջ եղած վիճաբանութեան մասին ալ խօսք չկայ Եղիշէի քով, եթէ Ա. եւ Բ. Եղանակներու մէջ ցրուած ինչ ինչ տեղիք հոս չեն վերաբերիր:

Մարգարանը, որ «սրտի մտօք ընկալեալ էր զպարսկական օրէնան», այժմ ստուարացուցած իւր գունդը օգնական ոյժով, «սկսաւ այնուհետեւ պատրել զմասնս կարասուով եւ զմասնս ողորպական բանիւք. զամիկն ամենայն ասեղ բանիւք սպառնացեալ սրտաթափ առնէր: Հանապազորդ առատացուցանէր զուճիկան տաճարին, եւ յերկարէր զնուազուրախութեան, մաշելով զերկայնութիւն գիշերացն յերգս արբեցութեան եւ ի կաքաւս լիտութեան. քաղցրացուցանէր ոմանց զկարգս երաժշտական եւ զերգս հեթանոսականս. մե-

²⁸ Տպ. տուեալ:
²⁹ «Առաջին հրամանն» է Սուրովի (եւ իր նախորդներու՝ Վաղարշի եւ Կաւտարի) կրօնի աղատութեան հրովարտակը:
³⁰ Տպ. արասցեն:

ծապէս զովութիւնս մատուցանէր զօրինաց թագաւորին: Բերեալ եւ յարքունուստ բազմութիւն կարասուոյ. եւ միում միում կաշառաբար զազտ խթէր ի պատճառս պատուոյ եւ պարգեւի. եւ բազում նենգութեամբ զանմեղ մարդիկ հրապուրէր եւ յինքն արկանէր»:

Սկսաւ բաշխել մոզս ի տունս նախարարացն եւ մեծամեծ ոռոճիկս կարգել, զոհել պատրուծակա եւ բռնաբար կնքաւոր մարդկանն տալ ուտել միս յազածոյ եւ երկիր պազանել արեգական:

Իբրեւ սկսաւ բազմանալ ընդ ամենայն աշխարհն այնպիսի պղծագործ խառնակութիւն, յանդգնեցան եւս եւ կանայք փշտիպանացն յաւուրն կիրակէի անցուցանել զծրագունս եկեղեցւոյն եւ պատառել զհանդերձս հաւատաւոր կանանց» (49):

Մարգարանին նոր հնարքները՝ ժողովուրդը մեղկացնել խաղերով, երգերով եւ շուայտութեամբ, ազատներն եւ ուսմիկը՝ կաշառքով կրակի պաշտաման հրապուրելու են, կը յիշեցնեն Ստ. Ասողիկի տողերը. «յոյժ հարստահարելով զնախարարս Հայոց, զի չնայր ընդ կանայս ազատաց» եւ Արրահամ Մամիկոնեանի տողերը. «Եւ ընդ մտանելն նոցա յաշխարհս վրդովեցին զուխտ քրիստոնէութեան... ձեռնամուխ եղեն... զարս եւ զկանայս մատնել ի բանդս, ի խոշտանգանս ծանրաբեռն հարկապահանջութեամբ, զի այնու դիւրաւ կարասցեն... ի բաց կալ ի սուրբ հաւատոյ» (§ 48, 12):

51. ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԸԱՅՈՑ ԵՒ ԿԱՅՍԵՐ ՄԵՋ

Հայոց բողոքը թագաւորի հրամանին դէմ լսելի չեղաւ: Պարսկական բանակը մոզերու հետ ձեռն ի ձեռն կը շարունակէր հարստահարել քրիստոնեայ ժողովուրդը, բռնազրօսել եւ բռնի մոզութեան դրդել: Գրգուրութիւնը քրիստոնեայ ժողովրդեան օր աւուր աւելի կ'աճէր: Հայ բանակը սակայն դիտողի դերի մէջ էր տակաւին: Մողպետը կ'ըսէր. «Եւ եթէ անգէն մարդիկ այդպէս բռնացան, եթէ յանկարծ զինուորս եւս ընդ ինքեանս միաբանեցոցանեն, ո՞ր կարիցէ կալ առաջի դոցա յանդուզն յարձակմանդ» (47):

Իրօք ալ ի լուր այս անցքերու «Մեծն Վարդան Մամիկոնեան, որ էր ամրացեալ ի Տորոսական Զոսայլ» առած հետը Տաճատ Ռշտունեաց եւ Վահրիճ Անձեւացեաց տէրերն եւ «զգօրս լեռնակողմանն ընդ իւրեանս ամե-

լով», իբր 1200 հոգի, կը հասնի Այրարատ-
եան դաշտ (§ 48, 12) :

Հայ զօրքը կը գտնուէր նախարարներու
հրամանատարութեան տակ: Հայ եպիսկո-
պոսք եւ նախարարք ի լուսթեան սկսան
կազմակերպել բանակ: Եղիշէի հետեւեալ
տողերը, որոնք խանգարուած են, ունին ակ-
նարկութիւններ այս մասին. «Իսկ զայս ամե-
նայն իբրեւ տեսին սուրբ եպիսկոպոսուքն՝
եւս քաջ դրդեալ յորդորեցան ի նոյն միաբա-
նութիւն. եւ հնարագէտ իմաստութեամբ ընդ
երկուս բաժանեցին զբանակն. մանաւանդ
իբրեւ հաստատեալ զիտացին ի
միտս իւրեանց, եթէ անօրէն իշխանին Սիւ-
նեաց զօրհասական վէրսն ի հոգին ընկալեալ
էր, խորհեցան, մերժեցան եւ ի բաց փախեան
ի նմանէ:

Խորհուրդ արարեալ ի գիշերի միում ա-
մենայն ուխտին բազմութեամբ, կոչեցին եւ
զԱպարապետ զօրուն ի խորհուրդ. հարցին եւ
քննեցին եւ ի վերայ հասին մտացն անշար-
ժութեան, [որոյ ոչ եւս առ սակաւ մի հեռա-
ցեալ էր ի սիրոյն Բրիտտոսի: Միտքան ա-
ղօթս արարեալ ի վերայ նորա՝ վերտին ըն-
կալան զնա ի նոյն միաբանութիւն եւ նովաւ
որոացան զբազումս ի նոյն միաբանութիւն].
որք ոչ էին քակեալ յառաջին միաբանու-
թենէն՝ եկին եւ ժողովեցան գունդ զօրաց
բազմաց: Եւ եւս հեռագոյն զատեան ի մո-
զացն եւ ի մոզպետէն եւ յանօրինէն Վասա-
կայ» (49):

Աղուանից պատգամաւորութիւնը նպա-
տակ ունէր կնքել Հայոց հետ զինակցութիւն:
Պէտք է ենթադրել թէ նոյնպիսի հրեշտակու-
թիւն մ'ալ եկած ըլլայ Վրաց կողմէն:

Տեղի կ'ունենայ զաղանի զինուորական
խորհրդաժողով, «համազունդ ժողով լինէր
ամենայն աշխարհին վասն գուժաբեր հրեշ-
տակացն, որ հասին առ նոսա» (54):

Այս ժողովի մէջ կ'որոշուի զաղանի զես-
պանութիւն մ'ուղարկել Կայսեր, Յուստինո-
սին, եւ զնեւ հետեւեալ առաջարկութիւն-
ները.

ա. Հայաստան, Վրաստան եւ Աղուանից
աշխարհը ինքնակամ կ'ենթարկուի Հռով-
մէական կայսեր գերիշխանութեան:

բ. Եթէ յանձն առնէ Կայսրը զօրքով
պաշտպանել այդ աշխարհները Պարսից զէմ:

գ. Այդ երկիրները պիտի վայելեն իրենց
անկախութիւնը կայսեր գերիշխանութեան
տակ:

դ. Պիտի վայելեն կրօնական ազատու-
թիւն քրիստոնէական սկզբունքներու վրայ:

ե. Իւրաքանչիւր պետութիւն պիտի ու-
նենայ իւր թագաւորը:

զ. Հայաստան պիտի գտնէ իւր նախկին
սահմանները, որով Մեծ Հայաստան պիտի
վերականգնուի Կայսեր հովանաւորութեան
տակ:

է. Եթէ ձախողի պատերազմը՝ պիտի
չլանձնէ Կայսրը փախստականները Պարսից:

Հայ զեսպանութիւնը «ի ծածուկ» ուղար-
կուեցաւ Կայսեր, հաւատացած, որ Կայսրը,
որ զինակցած էր Թուրքերու հետ ընդդէմ
Պարսից, սիրով ընդ առաջ պիտի դայ Հայոց
խնդրոյն:

Առ այս կը գրէ Եղիշէ (54—55).

«Յայնմ ժամանակի զմի ոմն ի մեծ նա-
խարարացն՝ ի տոհմէն Գնունեաց Ատոմ՝
առաքէին ձեպով յերկիրն Արեւմտից, ցուցա-
նել զայս ամենայն խորհուրդ զչարիմաց, թա-
գաւորին Արեւելից. [միանգամայն պատմել
եւ զիւրեանց քաջութիւն արութեանցն, զոր
զործովք կատարեցին՝ առ ոտն հարկանելով
զահեղ հրամանն եւ մեծապէս սատակումն ի
վերայ մոգուցն հասուցանել¹], խնդրել ի
նմանէ օգնականութիւն սատարութեան. եւ
եթէ նա կամեսցի՝ նմա մտանել ի ծառայու-
թիւն: Եւ այս է պատճէն հրովարտակին,
զոր զրեցին առ Թէոդոս (Յուստինոս) երա-
նելի կայսր:

Յովսէփի եպիսկոպոս (Յովհաննէս Հայոց
կաթողիկոս³) բազում եպիսկոպոսակցօք
իմովք եւ ամենայն զօրք Հայոց՝ Վասակ
Մարգարէի եւ Ներշապուհի⁴ Ռեմբոսեան հան-

¹ Հմմտ. եւ էջ 103: Ատոմ Գնունի մը կը յի-
շուի 451ին ի թիւս ուխտապահ նախարարաց (Փարպ.,
45, 86 եւս = Եղիշէ, 77, 150): Նոյն թուականին
Հայոց կողմէն առ Թէոդոս փոքր ուղարկուած զես-
պանութեան անդամներն են ըստ Փարպեցւոյ (63) Վա-
հան Ամասունի, Հմայեակ Մամիկոնեան (99) եւ Մեր-
հուտան Արծրունի: «Ի տոհմէն Գնունեաց Ատոմ» Եղի-
շէի Սկզբնագրին կը պատկանի: Պէտք է ըսել, թէ
Չ. դարու վաւերագրներու մէջ Գնունեաց իշխաններ
չեն յիշուիր. ծանօթ է Ի. դարէն «Մեծ Գնունի», որ
Հերակղի օրով Հայաստանի յունական բանակին զօ-
րավարն էր (Մեր. 101—103):

² Յայնմպէս խմբագրին յաւելուածք. պատգա-
մաւորութիւնը անշուշտ Ազոտամբութեան յառաջ
զրկուած է:

³ Այսպէս կը ստորագրէր Յովհ. կաթողիկոս իւր
նամականներուն մէջ. Գիրք թղթոց, 81:

⁴ «Ամենայն զօրք Հայոց» անտեղի յաւելուած է:
«Վասակ մարգարէն» յայտնապէս փոխառութիւն է
Փարպեցիէն (47). նոյն աղբիւրէն է նաեւ «Ներշա-
պուհ», որ ըստ Փարպեցւոյ «ի տոհմէն Արծրունեաց»
է. Եղիշէ (32, 77, 150) թէ եւ երկուսն ունիւնէ «Ար-
ծրունի» գիտէ, բայց հոս եւ քիչ յետոյ, էջ 56, ըրմ-
բանքն կ'անուանէ: Այս անուամբ նախարարական

զերծ սպարապետաւ⁵ եւ ամենայն մեծամեծ
նախարարօք՝ առ մեծանունդ Թէոդոս (Յուս-
տինոս) Կայսր, բազմացի ողջոյն մեր առ
քեզ [եւ ամենայն զօրաց քոց⁶], որ խաղաղա-
սէր մարդասիրութեամբ ձերով յերկէք ծո-
վու եւ ցամաքի. եւ չիք ոք յերկրաւորացս,
որ ձերում անարդել տէրութեանդ՝ ընդդէմ
դառնայցէ: Որպէս եւ մեք ունիմք զանսուտ
յիշատակարանն⁸ զառաքինի նախնեացն ձե-
րոց, < որք > ունելով զԵւրոպէ՝ անցին եւ
տիրեցին եւ Ասիացոց կողմանցն՝ ի սահմա-
նացն Սեմայ⁹ մինչեւ ի կողմանս Գաղե-
րովի¹⁰. եւ ոչ գտաւ ստամբակեալ եւ երեւալ
ըստ ձեռն նոցա:

Եւ յայնչափ մեծ իշխանութեան՝ դաս-
տակերտ մեծ եւ սիրելի զՀայոց աշխարհս
անուանէին¹¹: Վասն որոյ եւ նախնին մեր
Տրդատիոս [յիշելով զառաջին սէրն ձեր, որ]
ի տղայութեան¹² փախուցեալ ի հայրասպան

տուն ծանօթ չէ ինձ. կայ «Ռոփսենից տոհմ» (Փարպ.,
86. «ի տոհմէն Ռոփսենից Բարիկ եւ Յոհան»), որ Սա-
հակայ զահնամակի մէջ «Ռոփսեն» եւ Ջօրահամարի
մէջ «Ռոփսեն» կը նշանակուի (H. АДОНИ, АРМЕНИЯ В
ЭПОХУ ЮСТИНИАНА, Պետերբուրգ 1908, էջ 250 եւ
251): Կ'երեւայ թէ տոհմանունն Ռեմբոսեան Սկզբնա-
գրին կը վերաբերի:

⁵ Սպարապետը (Վարդան) Եղիշէի գրքին մէջ
ցայս վայր յանուանէ չէ յիշուած. հմմտ. էջ 49 «ան-
կան առանց հարցանելոյ ի վասն Սպարապետին, ուր
ժողովեալ էին զօրքն Հայոց»:

⁶ Կը սպասուէր կամ «առ ձեզ եւ առ ամենայն
զօրս ձեր» եւ կամ «ձեզ եւ ամենայն զօրաց ձերոց».
Խմբագրին յատուկ քերականութիւնը. հմմտ. էջ 23
«բազմացի ողջոյն առ քեզ եւ ամենայն մեծի սպահիկ
Արեւաց»:

⁷ Հմմտ. «որ ի սկզբանն նախնեաց մինչեւ ցայ-
սօր անարգիլ տէրութիւն եւ հաստատուն իրաւունք
առեալ են մեզ». Գ. Մակ. 2. 19:

⁸ Առանց տարակուսի խօսքը Ստոյն Կալիսթենէսի
Աղեքանդը մեծի վարուց մասին է: «Անուտ յիշա-
տակարանք» Վրթանէս (606) Բերդոզի սիրական ա-
ստութիւնն է. հմմտ. «զորոց ստութիւն անուտ յիշա-
տակարանք մեր յանդիմանեն» (Գիրք թղթոց, 119).
«Այսպէս ունի պատմութիւն անուտ յիշատակարանաց
մերոց» (անդ 143). «Որպէս ունի... անուտ յիշա-
տակարանացն պատմութիւն» (Անանուն ժամանակա-
գրութիւն, 59):

⁹ Ձեռ. եւ Տպ. «Սերաց». կ'ուղղեմ ըստ իմաս-
տին ա'յսպէս:

¹⁰ Այս տեղիքը փոխ առնուած է հաւանօրէն Հիւպ-
պոլիտեայ ժամանակագրութեանէն, ուր կ'ըսուի. «Հայք,
որ են սահմանք սոցա ի Մարաց ընդ կողմն հիւսիսոյ
մինչեւ ի Գաղիերովի» (6). «Եւ առնեն սահմանք Սե-
մայ... ի Պարսից եւ ի Բակտրիոնէ մինչեւ ի Հնդիկս
եւ ձգին մինչեւ յիսկիւնոց < ուն > ընդ. եւ Գամայ...
յիսկիւնոց սոցա մինչեւ ի Գաղբերովի կողմն հարաւոյ»
(Անանուն ժամանակագրութիւն, 4):

¹¹ Ի՞նչ աղբիւրէ գիտէ թղթիս խմբագրը, թէ
Յոյնք Հայաստանը «զատակերտ մեծ սիրելի» կ'ա-
նուանէին. հաւանօրէն Ազաթանդեգոսի հետեւեալ տե-
ղիքն նկատի ունի. Տրդատ կը գրէ իւր հրովարտակի
մէջ. «Իմաստութիւն Յունաց հասցէ զաստիարակի-
տիկ կայսերաց» (Ազաթ. 73):

¹² «Անդ ոմն պրծեալ ապրեցուցանէր ի հինէ անտի
յորդոցն Խորովու թագաւորին Հայոց՝ մանկիկ մի
փոքրիկ, անուն Տրդատ. առեալ զայնկացն փախուցեալ

մարդասիրող հօրեղբարցն¹³ իւրոց՝ ա-
պրեալ սնաւ յերկրից Յունաց եւ ի ձէնջ թա-
գաւորեալ տիրէր աշխարհիս: Սոյնպէս եւ
զհաւատն որ ի Բրիտտոս՝ ընկալեալ ի սուրբ
եպիսկոպոսապետէն Հռովմայ, լուսաւորեաց
յիսաւարային կողմանս հիւսիսոյ. զոր եւ
այժմ կամին ի մէնջ կորդել եւ հանել խաւա-
րասէր որդիքն Արեւելից:

Եւ մեր ի ձեր քաջութիւն արութեանդ
խիղախեալ էր ինչ որ ընդդէմ դարձաք նոցա
հրամանացն, եւ բազում այն է, որ արդ ա-
ռաջոյ պատրաստեալ եմք: Ընտրեցաք զմահ
աստուածաշուտութեամբ քան զկեանս ուրա-
ցութեամբ: Եւ եթէ դուք եւս ի ձեռն առջիք
զմեզ, ահա կրկին կենաց զիպեցաք եւ ոչ մի
անգամ մահու: Եւ եթէ սակաւիկ մի հեղ-
դայք, գուցէ եւ այլոց աշխարհաց բազմաց
հասանիցէ տապ բոցոյ սորա:

Եւ իբրեւ յանդիման եղեն մեծի թագա-
ւորին եւ ընթերցան զգիր պաղատանաց աշ-
խարհին Հայոց եւ զյիշատակարանս ի նախ-
նեացն՝ բազում մատենաք ի մէջ եկեալ ըն-
թերցան, որ զնոյն ուխտ գտանէին հաստա-
տութեամբ:

«Եւ [մինչ զեւ] երանելին Թէոդոս (Յուս-
տինոս) [հարցանէր զամենայն զսինկղաթի-
կոսքն եւ հնարս իրացն գտանել խաղաղու-
թեամբ] եւ հոգ տանէր մեծաւ յօժարութեամբ
զի մի եկեղեցիքն արեւելից յափշտակեցին
յանօրէն հեթանոսաց... < նմին իրի յանձն
առ > պատերազմակից լինել ուխտին քրիս-
տոնէութեան: Վասն այնորիկ փութացաւ ար-
ձակեաց զեսպան առ քաղաւորն Պարսից (առ
Հայս) զնոյն Եփլարիոսն (Արտակ Գնունի) եւ
եմուտ ընդ մնա (նոսա) յուխտ հաստատու-
թեան ձեռնքալի (ձեռնառու) լինել [ի] զօ-
րացն Հայոց զօրու եւ զինու եւ ամենայն օգ-
նականութեամբ»:

Այս պատգամաւորութեան եւ դաշնա-
գրութեան մասին յայտնապէս կը գրէին
Եւազր եւ Սերիոս եւ ուրիշներ կ'ակնարկէին
ընդ ազօս:

ի դուռն ի կողման Յունաց... արդ երթեալ՝ սնեալ
եւ ուսեալ Տրդատէս առ կոմսի ումեմն Լիկիանէս ա-
նուն կոչեցելոյ»: «Եւ յայնմ... թագաւորն (Գիոկղե-
տիանոս)... թագ կապեաց ի զլուս նորա... արձա-
կեաց յիւրական աշխարհն Հայոց»: Ազաթ. 24, 29:
Ազաթանդեգոսն է խմբագրին աղբիւրը թէ հոս եւ թէ
վարն:

¹³ Անակ եւ իր եղբայրը, որոնք սպաննեցին զիսոս-
րով, հայրն Տրդատայ, իբրեւ պարթեւ ազգական էին
Հայ արշակունի տան «վասն ընութեան եղբայրութեան
ազգատոհմին» (Ազաթ. 17). ուստի Անակ եւ իւր եղ-
բայրն Տրդատի համար «հօրեղբայրներ» նկատուած են:

Եղիշէի Սկզբնազիրը ազատուած է խմբագրէն: Անիկա ուզելով Ղազար Փարպեցույ հետեւեալ տողերուն յարասել, խեղաթիւրած է դէպքը, ժխտելով Յունաց Կայսեր խոստացած օգնութիւնը: Ղազարի տողերն են.

Վասակ եւ Նախարարք «վաղվաղակի նամականի արարեալ առ Կայսր ... եւ պատրաստեալ ճանապարհին Յունաց կազմէին զիշխանն տանն Ամատունեաց Վահան ... եւ զտուրբ սեպուհն զՀմայեակ ... ի Մամիկոնէից տոհմէն եւ զերանելին Մերհուստան (Արծրունի) ... յուղարկէին առ Կայսր ...¹⁴ որք երթեալք յանդիման եղեն թագաւորին Թէոդոսի. որոյ լուեալ զպատճառ նոցա երթիցն՝ սիրով լսէր ի նոցանէ եւ յանձն առնոյր օգնել նոցա զնդիւ. եւ մինչդեռ պատրաստէր զիրո խոստմանն՝ հասեալ վախճան սրբոյն՝ վճարէր ի կենցաղոյս: Եւ թագաւորէ փոխանակ նորա Մարկիանոս, որոյ եւ տեղեկացեալ նորա զպէտոս խնդրոյն իրացն Հայոց՝ հարցանէր զաւագոս դրանն, թէ ո՞րպիսի թուի ձեզ պատասխանի առնել արանցդ եկելոց յաշխարհէն Հայոց առ ձեզ: Պատասխանի տուեալ Անատոլիայ, որ ի ժամուն ասպարապետ էր Անտիոքայ, եւ Փղորենտի ուրումն առն՝ ասորի ազգաւ, որ էր աւագ դրանն թագաւորին, եւ ասեն. Մեզ ոչ թուի հաճոյ արհամարհել զուխտ եւ զհաստատութիւն, զոր ի բազում ժամանակաց գրեալ եւ կնքեալ է առաջին թագաւորացն, եւ գրգռել պատերազմաւ իրս մի խաղաղացեալս, եւ ի բաց հանել զաշխարհ մի ի ծառայութենէ թագաւորին իւրեանց: Այլ եւ զելս անյայտ իրացդ պարտ է անել զմտաւ, զոր ոչ ոք կարէ գիտել, թէ ո՞րպէս՝ դիւրա՞ւ եւ կամ սաստի՞կ պղտորմամբ պատերազմդ եղեալ վճարեսցի: Եւ զայս այսպէս ասացեալ՝ կասեցուցին զմիտոս թագաւորին եւ վնասեցաւ (վրիպեցա՞ւ) ակնկալութիւն Հայոց, որում ուշ եղեալ մնային, եւ ոչ պատահեցաւ: Եւ մինչդեռ յայաղեալ էր զրոյց պատասխանոյն այսպէս՝ հասեալ գործ պատերազմին Հայոց եւ Պարսից կատարէր» (63, 73—74):

Այս տողերու մէջ կը հաստատէ Ղազար. ա. Ապստամբութենէն յառաջ դիմած են Հայ Նախարարք Կայսեր:

բ. Պատգամաւորները տեսնուած են Թէո-

դոս Փոքրի հետ. որ վախճանած է բանակցութեան օրերուն (450, Յուլիս 2):

գ. Յաջորդած է Մարկիանոս: Կը հարցնէ Հայ դեսպաններու առաջարկութեան մասին Անատոլիոսի, Արեւելեան բանակի սպարապետի եւ Փղորիանոս հիւպատի կարծիքը:

դ. Անոնք խորհուրդ չեն տար լուծել Պարսից հետ կնքուած խաղաղութեան դաշինքը (ժամանակ մը, երբ Հոնք արեւմուտք կը սպառնային պետութեան). չեն ուզեր հայկական հարցը միւսանգամ հրապարակի վրայ դնել. երկիւղ կը յայտնեն թէ պատերազմը կարող է բարդութիւններ բերել իր հետ:

ե. Կը մերժուի Հայոց առաջարկը:

զ. Մինչ հայ պատգամաւորք դեռ բանակցութիւններով զբաղած էին ի Կ. Պոլիս, ի Հայս տեղի կ'ունենայ Պարսից հետ բախումը. ապստամբութիւնը կը զսպուի պարտութեամբ հայ բանակին:

է. Զգալի է Փարպեցույ զըջին տակ հանդէպ Մարկիանոսի խաղաղասէր զգածում մը, հակառակ Հայոց խնդրանքին մերժման:

Ղազարի եւ Եղիշէի մէջ տեսնուած անհամաձայնութեան կէտերէն կը յիշեմ հոս:

Ղազարի համաձայն Հայաստանի արտաքին քաղաքականութեան ղեկը կը գտնուէր Հայոց մարզպանի՝ Վասակի ձեռքը. անիկա միաբան խորհրդով նախարարաց, յատկապէս Հայոց սպարապետին, կ'որոշէ դեսպանութիւն զրկել Կայսեր: Թուղթերը, որոնք զրուցեցան այս առթիւ ստորագրած է Վասակ եւ կնքած սեպհական կնքով (Փարպ., 63, 84): Ժամանակակից կաթողիկոսն եւ եպիսկոպոսները մասնակցութիւն չեն ունեցած յայտմ:

Եղիշէի համաձայն առ Կայսր թուղթը կը գրէ Յովսէփ եպիսկոպոս հանդերձ եպիսկոպոսակցօք եւ մասնակցութեամբ նախարարաց. պատգամագնաց կ'ըլլայ սակայն ոչ եպիսկոպոս մը, այլ Արտակ Գնունի: Պիտի սպասուէր, որ 570ին ոչ թէ կաթողիկոսն Յովհաննէս, այլ նախարարական ժողովին նախագահն ինքնին ուղղէր այսպիսի կարեւոր առաջարկութիւն մը Կայսեր, յանուն նախարարներու. կաթողիկոսը կարող էր առանձին թղթով իւր եւ եպիսկոպոսներու կողմէն յանձնարարել նախարարներու խնդրագիրն եւ ընծայել իւր հաւանութիւնը: Վաղածամ էր անշուշտ դեռ Հայոց կաթողիկոսին համար իրրեւ ազգապետ միջամուխ ըլլալ այսպիսի քաղաքական եւ գիւնտորական գործերու մէջ: Գումարուած էին անշուշտ այս միջոցին,

երբ բովանդակ ազգին ճակատագիրը պիտի որոշուէր, հայ եպիսկոպոսներու ժողովը. դրած էր ըլլայ արքայից արքայի, ըլլայ Կայսեր կամ Կ. Պոլսոյ պատրիարքին, թղթեր: Հայ եպիսկոպոսարաններու ցանկը, զոր ներկայացուցինք վերը, կրնայ իւր հիմնական գծերու մէջ պատկերն ըլլալ դարուս եպիսկոպոսարաններու դասաւորութեան: 570ին կը յիշուին հետեւեալ եպիսկոպոսները, որոնք Յովհաննէս կաթողիկոսի զլիսաւոր գործակիցները կը ներկայանան (Գիրք թղթոց, 78, 81).

1. Աբրահամ Տարօնոյ եւ Մամիկոնենից,
2. Գրիգոր Մարզպետական,
3. Ներս Բասենոյ եւ Մարգաղայ,
4. Ստեփանոս Տայոց,
5. Մաշտոց Խորխոռունեաց,
6. Գիւտ Վանանդայ,
7. Արգիշոյ Ասորեաց ուղղափառաց,
8. Քրիստափոր Ռչտունեաց,
9. Բար Ամատունեաց,
10. Սեկունդոս Մոկաց:

Յովհաննէս կաթողիկոս, որ ժամանակաւ Գարեգենից եպիսկոպոսն էր եղած, կը դուրս իրրեւ գրասէր եւ շինարար կաթողիկոս (557—574):

Հայոց դեսպանին Կ. Պոլիս կայսերական պալատի մէջ ցոյց տրուած վերաբերմունքի մասին այսպէս կը գրէ Եղիշէի խմբագիրը (55—56).

«Եւ մինչ դեռ երանելին Թէոդոս հարցանէր զամենայն զսինկիտոսքն եւ հնարս իրացն կամէր գտանել խաղաղութեամբ եւ հոգ տանէր մեծաւ յօժարութեամբ, զի մի եկեղեցիքն արեւելից յափշտակեցին յանօրէն հեթանոսաց, ի նմին ժամանակի անդէն վաղվաղակի հասանէր վախճան կատարածի կենաց նորա, եւ կարի չար խափանումն լինէր գործոյն օգնականութեան: Եւ թագաւորէր փոխանակ նորա Մարկիանոս կայսր, եւ ի ձեռն վատար արանց խրատուացն ծառայից իւրոց՝ Անատոլիայ որ սպարապետն էր եւ Եփրարիոս ասորի¹⁵, երկուքեանն անարգք եւ ի վատ արանց, միանգամայն եւ անատուածք. ի նոցա բանս ելեալ թագաւորին՝ ոչ կամէր անսալ միաբանել ուխտին Հայոց, որ ամենայն ուժով իւրեանց ընդդէմ կացեալ էին չարութեանն հեթանոսաց: Անարիս այս լաւ համարէր գուխտն հեթանոսաց պահել

¹⁵ Այսպէս առանց հորովելու, յայտնապէս Փարպեցույ ազգեցութեան տակ:

վասն մարմնական խաղաղութեան, քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան: Վասն այսորիկ փութացաւ արձակեաց դեսպան առ թագաւորն Պարսից զնոյն Եփրարիոսն. եւ եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան՝ ձեռնթափ լինել ի զօրացն Հայոց զօրու եւ զինու եւ ամենայն օգնականութեամբ»:

Այս տեղ խմբագրին անմիտ փոփոխութիւնները եւ հանդէպ Մարկիանոսի եւ անոր «ծառայից» ատելութիւնը կ'աղաղակեն մեծաձայն: Խմբագիրը նախապաշարուած է Կայսեր եւ անոր սպարապետի եւ հիւպատի մասին. Կայսրը «անարի» է եւ Անատոլիոս եւ Փլորենտիոս «անարգք եւ ի վատ արանց, միանգամայն եւ անաստուածք». անշուշտ ոչ թէ անոր համար, որ անոնք խորհուրդ չտուին Կայսեր՝ Հայոց աջակցել, այլ որովհետեւ մասնակցած էին անոնք Քաղկեդոնի ժողովին եւ դատաւարտած Դիոսկորոսն եւ իւր հետեւորդները: Կծու միաբանեայ մըն է խմբագիրը, թաթխուած է. դարու հակաքաղկեդոնական վէճերու մէջ¹⁶:

Եթէ Կայսրը յանձն չառաւ ձեռնառու ըլլալ Հայոց եւ խախտել զաշինքը Պարսից հետ, ի՞նչ պէտք ունէր «փութալ արձակել դեսպան առ թագաւորն Պարսից զնոյն Եփրարիոս (Florianos) եւ մտանել ընդ նմա (թագաւորին Պարսից) յուխտ հաստատութեան ձեռնթափ լինել ի զօրացն Հայոց»:

Հայք թէպէտ չգտան Կայսեր օգնութիւնը, բայց չյուսահատեցան, ըստ խմբագրին. իրենց ոյժի վրայ վստահ ուղեցին դիմադրել պարսկական ոյժին: Այս տեղ կը հակասէ խմբագիրը իւր աղբիւրին՝ Փարպեցույ, որուն համաձայն ապստամբութիւնը պատգամաւորներու վերադարձէն յառաջ արդէն զսպուած էր:

Այս փոփոխութիւններն ըրած է խմբագիրը մասամբ Ղ. Փարպեցույ հետ գէթ յընդհանուրն համաձայնութիւն մը գտնելու համար, եւ մասամբ ժխտելու համար Կայսերական բանակին զինակցութիւնը Հայոց հետ: Բայց միտ չէ դրած որ եթէ դոյութիւն ունէր «երկուց թագաւորաց միաբանութիւն» (56), եւ Կայսրն ինքնին ի ձեռն «Եփրարիոսի» ծանուցած էր թագաւորին իւր ձեռնթափ լի-

¹⁶ Հմմտ. Վրթանէս Քերգոյի տողերը. «Եւ անօրէն վիրագն Մարկիանոս ի սաստիկ ցամառնէ չարժեալ՝ հրամայեաց խոշտանդել» Եփեսոսի չարժողովի եպիսկոպոսները. Գիրք թղթոց, 120. այլուր կ'անհունանէ թագաւորը «ամբարիշտ» եւն:

նեն ի Հայոց, ապա պէտք չունէր թագաւորը ի լուր հայկական արարածութեան շփոթութեւն եւ գաղտնի դեսպան արձակելու Կայսեր, լրտեսելու անոր բռնութիւնը: Կը գրէ Սկզբնազիր Եղիշէ. «Ինքն դադա խորամանկեալ փութացեալ դեսպանս առաքէր առ Մարկիանոս Կայսր», ստուգեալ ճշմարտութեւնը դաշանց հաւատարմութիւնը (66):

Կայսեր հետ կնքուած դաշանց մասին Եղիշէի տողերուն ստուգութեան վկայ են արտաքինը եւ տոհմայիններէն Սերիոս. Եւազը կը գրէր. Հայք «ի ծածուկ հրեշտակութիւնս առ Յուստինոս առաքեցին եւ խնդրեցին մտանել ընդ իշխանութեամբ Հռովմայեցոց զի ազատ եւ անարգել պաշտել զԱստուած մարթասցին: Եւ իբրեւ ընկալաւ զդեսպանսն Յուստինոս եւ խոստացաւ նոցա գրովք եւ ահագին երդմամբ հաստատելովք տալ զգորսն կայսերական յօգնութիւն, Հայք սուր ի վերայ եղեալ կոտորեցին զիշխանսն իւրեանց»: Մեանդր (323) ակնարկութիւն ընելով դաշանցս վրայ այսպէս կը գրէ. Կայսրը երգում ըրած էր (Հայոց), որ որչափ իր կարողութեան մէջ է՝ ի գործ պիտի դնէ ամենայն ինչ, որպէս զի (Հայոց) հայրենի աշխարհը պահէ իր ձեռքին տակ. եւ եթէ յաջող ելք չունենայ պատերազմը, պիտի պաշտպանէ զանոնք, ապստամբութեան պարագլուխները, անոնց արեւակիցներն եւ առ հասարակ Կայսեր հովանաւորութեան տակ ապաստանարան փնտոողները եւ որ եւ է զէպքին պիտի չյանձնէ զանոնք Պարսից: — Գրիգոր Տուրոնեցի այսպէս լսած է այս մասին. «Յուստինոս Կայսեր Պարսկահայեր եկան բերելով իրենց հետ մետաքսահիւս գործուածներ, մեծ քանակութեամբ, խնդրելու անոր բարեկամութիւնը»: ...

Սերիոս Սուրէնի սպանութիւնը յիշելէն ետք կը գրէ. «Իսկ առ Հայս երզնոյր թագաւորն Յուստինոս եւ հաստատէր զնոյն ուխտ որ ի մէջ թագաւորացն էր երկոցունց՝ երաներոյն Տրդատայ եւ Կոստանդիանոսի. եւ տայր նոցա զգորսն կայսերական յօգնութիւն» (26). ուստի կ'ենթադրէ Հայոց դեսպանագնացութիւնը:

Սերիոսի յիշեալ խօսքերէն կ'ուզէ Է. Շտայն¹⁷ հետեւցնել, թէ Կայսրը Հայոց Կ. Պոլիս փախչելէն, ուստի 571 Փետրուարէն ոչ

շատ վերջը, միւսանգամ հաստատած ըլլայ երդմամբ իր խոստացած պաշտպանութիւնը եւ վերահաստատած՝ 314ին Կոստանդիանոսի եւ Տրդատայ մէջ կնքուած դաշնագրութիւնը. «այս դաշնագրութեան վերանորոգութենէն այնպէս կ'իմացուի, թէ նպատակ կար հայ թագաւորութիւնը միւսանգամ հաստատել եւ թագը Վարդան Մամիկոնեանի տալ» (էջ 24): Սերիոսի խօսքերը դժուարաւ թէ այսպիսի մեկնութեան մը հիմ ծառայեն: Պատմագիրը կ'ուզէ պարզապէս յիշել, թէ ապստամբութիւնը տեղի ունեցած է կանխաւ Կայսեր եւ Հայոց մէջ կնքուած դաշինքի մը հիման վրայ: Թագաւորութեան վերահաստատութեան միտքը սակայն կ'երեւայ թէ խորհրդածութեան առարկայ եղած է ժամանակին: Պարսկահայաստանի ենթարկուիլը Բիւզանդիոնի ինքնին կը բերէր իր հետ Մեծ Հայաստանի վերականգնումը, միացմամբ Հռովմայական Հայաստանի: Ասով պիտի յանձնէր թագաւորութեան հարցը: Այս մասին բացայայտ ակնարկութիւն մը կը գտնեմ թովմաս Արծրունեոյ քով. «Իսկ զթագաւորարանակ տեղին մեծին Տրդատայ տան (Հայք) ի ձեռս Վահանայ Արծրունեոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. քանզի խորհեցան քագաւորեցուցանել զնա ի վերայ Հայոց... Բայց յետոյ անմիաբան գտեալք նախարարքն Հայոց՝ թողին զոր խորհեցանն վասն թագաւորելոյ Վահանայ եւ անցին զնացին առ մեծն Վարդան. զնաց եւ Վահան ընդ նախարարան առ Վարդան յառաջագոյն՝ տալ նմա զվերահացութիւն Հայոց. եւ եղեն հնազանդել նմա՝ զամենայն առուրս Վարդանայ» (79):

Նկատմամբ ժամանակի այսպէս կը խորհրդածէ Է. Շտայն (անդ, 22—23). «Կայսեր հետ գաղտնի դաշնագրութիւնը անշուշտ թէ կանխած է ապստամբութիւնը: Հայերը չէին կարող այնպիսի լուրջ քայլ մ'առած ըլլալ առանց կանխաւ ապահոված ըլլալու իրենց թիկունքը: Իրողութիւնը, թէ խօսքը դադարի դաշնագրութեան մը մասին է, որ Հայոց Ապստամբութենէն եւ անոր սկզբնաւորութեան տեղի ունեցած Սուրէնի սպանութենէն յառաջ կնքուած էր, կարելի է ապացուցանել այսպէս.

1. Յովհաննէս Բիկլարեցի — թէ եւ անոր ժամանակագրութիւնը շատ վստահելի չէ առ հասարակ — կը գնէ յայտնապէս անջրպետ

¹⁷ Ernst Stein, Studien zur Geschichte des byzantinischen Reiches. Stuttgart 1919, S. 22—23.

Հայոց Կայսեր ենթարկուելու եւ անոր յայտնի միջամտութեան մէջ:

2. Եւազը Ե. 7 բացորոշ կը գրէ, թէ Հայք ի ծածուկ Կայսեր դեսպաններ զրկեցին եւ իրենք զիրենք անոր ենթարկեցին պայմաներով, զորոնք երդմամբ ընդունած է անիկա. այս տեղի ունեցած է Անտիոքի Գրիգոր պատրիարքի առաջին տարին, որ ըստ Թէոփանէսի (յամն աշխարհի 6062) առ կանուս 569 Սեպտեմբերին կը սկսի եւ առ անագան 571 Օգոստոսին կ'աւարտի:

3. Յովհ. Եփեսացի Հայոց Կայսեր իշխանութեան ենթարկուելու համար երկու թուականներ կը նշանակէ: Առաջինն է (Բ. 24) Սելեւկեան 880, որ 569 Օգոստոսին կը կ'աւարտի, որովհետեւ Յ. Եփեսացի Սելեւկեան տարին յունական Ինդիկտիոն տարւոյն կը հաւասարեցնէ, ինչպէս Գ. 6 կը ցուցնէ, ուր 578 Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր՝ Սելեւկեան 880ով կը նշանակուի: Երկրորդ անգամ (Գ. 11) այս դէպքը տեղի ունեցաւ կ'ըսէ «Յուստինոսի թագաւորութեան Ե. տարւոյն, որ է Աղեքսանդրի 882 տարին»: Որովհետեւ առաջին թուականը չի համաձայնիր Եւազրի տուեալին՝ կը մնայ երկրորդը նկատի առնել, որ աւելի խնամքով նշանակուած է. Յուստինոսի Ե. տարին կ'աւարտի 570 Նոյեմբեր 13ին. Սելեւկեան 882 կը սկսի 570 Սեպտեմբեր 1ին. ըստ այսմ դաշինքը կնքուած է 570 Սեպտ. 1ի եւ Նոյեմբեր 13ի միջեւ»:

Է. Շտայնի այս եզրակացութիւնը պիտի հաստատուի վարը Ասողկան վկայութեամբ, որ Սուրէնի մահը ճշգրիտ 571, Փետրուար 3ին կը նշանակէ: Հայոց փախուստը Կ. Պոլիս դէպքէս ամիսներ յետոյ պատահեցաւ, ինչպէս պիտի տեսնենք յետոյ:

Կայսեր եւ Հայոց մէջ կնքուած դաշնագրութիւնը անպատում ուրախութիւն պատճառեց Հայոց. «Եւ իբրեւ այսպէս հաստատեցաւ [եւ հաստաւ] օգնականութիւն յուսոյն նոցա ի մարդկանի (Կայսերէ), զարձեալ սուրբ Եպիսկոպոսունքն քաջալերել սկսան զանձինս եւ զգորսն ամենայն» (56):

Ինձ կը թուի թէ այս մեծ յաջողութեան մասին է խօսքը, երբ կ'ըսուի (62) թէ «Իբրեւ այս ամենայն աջողութիւն լինէր երկիւղածացն Աստուծոյ, ամենայն Եպիսկոպոսունք եւ երկիցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին, զողջոյն ամիսն Քաղոց պահօք եւ

աղօթիւք առնել խնդրուածս առ Աստուած. եւ զտօն պատերազմացն յաղթութեան (դաշնացն աջողութեան) խառնել ի սուրբ տօն Յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կացցէ մեծ Յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին»:

Քաղոց ամիսը 570ին կը համապատասխանէր յուլեան տարւոյ Նոյեմբեր 3—2 Դեկտեմբեր շրջանին: Ժամանակը ճշգրիտ կը համաձայնի Է. Stein մատնանշած ամիսներուն: Հաւանօրէն այս միջոցին մեկնած էր Արտակ Գնունի Կ. Պոլիս. եւ վերադարձած Դեկտեմբերի մէջ, բերելով հետը կայսերական գիրքը, սրով կը խոստանար Յուստինոս օգնել Հայոց կայսերական զօրքով: Այս ուրախաւէտ օրուան յիշատակը կը յանձնարարուի «խառնել ի սուրբ տօն Յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս ընդ աստուածային անանց տօնին»: Այս մեկնութիւնը իրեն հիմ ունի Ստեփ. Ասողիկի այն տեղին, ուր կ'ըսուի թէ Հայոց ապստամբութիւնը տեղի ունեցաւ 571, Փետր. 3ին: Այսպէս կարելի է նաեւ 571 տարւոյ վերջերը ձեռք բերուած յաղթութիւններու ալ մերձեցուիլ (հմմտ. § 16): Նոյնպէս պէտք է իմանալ նաեւ յաջորդ հաստուածը (62), ուր կ'ըսուի այսպէս. «Եւ զտոյն զայս [ամենայն] այցելութիւնս Աստուծոյ, որ ի վերայ աշխարհին Հայոց մեծապէս երեւեցաւ, զրեցին սուրբ Եպիսկոպոսունքն եւ ետուն տանել յաշխարհն Յունաց ի մեծ Քաղաքն առ սուրբ ուխտ Եկեղեցւոյն, զի եւ նոքա աղօթս առնելով խնդրեսցեն յԱստուծոյ՝ որպէս սկսաքս՝ ի նմին եւ կատարեսցուք», այս ինքն յայտնեցին նաեւ Եպիսկոպոսները առթիւ դաշանց իրենց ուրախութիւնն եւ շնորհակալութիւնը Կայսեր եւ Պատրիարքին:

(Շարունակելի): Է. Ն. ԱԿԻՆԵԱՆ

